ԽՈՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Ռելիկտային անտառները անցյալ դարաշրջանների բուսական և կենդանական աշխարհների յուրօրինակ վկաներ են և առանձնանում են իրենց երկրաբանական տարիքով: Դրանք գոյատևել են առանց փեսանելի փոփոխությունների առնվազն Պլիոցենից սկսած և գոյատևել են տվյալ տարածքում մեկուսացված, քանի որ այդ վայրերը ունեին իրենց համար միկրոկլիմայական և հողային հատկապես բարենպաստ պայմանների համադրություն (ֆլորոգենետիկական):

Մեր հանրապետության տարածքը իր բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմաններով բավականին նպաստավոր է ռելիկտային բուսականության պահպանման համար (http://www.unece.org/env/europe/monitoring/Armenia/ru/Part%20I%20):

Ըստ ակադեմիկոս Ա. Թախտաջյանի հետազոտությունների՝ Հայաստանը գտնվում է բուսական խոշոր մարզերի շփման սահմանագծում, որի արդյունքում նրա բուսաշխարհը ունի և՛ հարուստ տեսակային կազմ և ընդգծված տեղային տեսակներ՝ ռելիկտներ:

Հայաստանի Հանրապետության «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրը գտնվում է Սևան ազգային պարկի արևելյան մասում և տարածվում է Սևանա լեռնաշղթայի հարավ- արևմտյան լանջերին, Դարանակ գյուղից մինչև Ձիլ գյուղ՝ մոտ 18 կմ երկարությամբ և 1.5-3.8 կմ լայնությամբ: Արգելավայրը զբաղեցնում է 1807 հա մակերես: Տարածքը կտրտված է, հանդես են գալիս տարբեր չափերի 5 հատվածներ, որոնց սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 55.0 կմ: Արգելավայրի էկոլոգիական նպատակն է ապահովել գիհու և կաղնու անցած դարաշրջանների բնական անտառների պահպանությունը: